ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-832-26.04.2024-ՊԻ-011/0, «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-832[1]-26.04.2024-ՊԻ-011/0 ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-832[2]-26.04.2024-ՊԻ-011/0 ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 2, 1-ին մաս «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում	Առաջարկվում է օրենքների նախագծերի անցումային դրույթներում սահմանել, որ նախագծերն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Օրենքների նախագծերի ուժի մեջ մտնելու՝ առավել սեղմ ժամկետներ սահմանելու անհրաժեշտությունը պայմանավորված է ավագանու անդամների անհամատեղելիության պահանջների վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումների խնդիրներն սեղմ ժամկետներում հաղթահարելու անհրաժեշտությամբ:	Ընդունվել է	Ընդունվել է

		փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 2, 1-ին մաս «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 2, 1-ին մաս	Մասնավորապես, նախագծերի փաթեթի ընդունմամբ կվերացվի գործող կարգավորումներում առկա օրենսդրական անհստակությունը և կամրագրվի համայնքի ավագանու անդամների կողմից հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու արգելքը: Իրականացված օրենսդրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո առաջիկա ավագանու ընտրությունների ժամանակ կգործի բացարձակ արգելք համայնքի ավագանու անդամների և հանրային պաշտոնների ու հանրային ծառայության պաշտոնների անհամատեղելիության մասով, իսկ այն ավագանու անդամները, ովքեր գործող օրենսդրական կարգավորումների պարագայում հայտնվել են անհամատեղելիության իրավիճակում չեն կրի բացասական հետևանքներ: Հարկ է նկատել, որ այժմ առկա են մեծ թվով ավագանու անդամներ, ովքեր համատեղում են պաշտոնը հանրային պաշտոնների և հանրային ծառայության պաշտոնների հետ: Այս դեպքերի առնչությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի դրույթներով, հարուցել է վարույթներ, որոնց ժամկետը 90 օր է: Ինչպես նշվել է վերը, օրենսդրական		

			փոփոխություններով, Հակակոռուպցիոն քաղաքականություն խորհրդի նիստին ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականի հիման վրա, ամրագրվել է, որ այն ավագանու անդամները, ովքեր գործող օրենսդրական կարգավորումների պարագայում հայտնվել են անհամատեղելիության իրավիճակում, կազատվեն բացասական հետևանքներից: Այսպիսով, սույն օրենսդրական փոփոխությունները մինչև վերոնշյալ ժամկետում ուժի մեջ չմտնելու պարագայում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ղեկավարվելով գործող կարգավորումներով, կընդունի անհամատեղելիության վերաբերյալ եզրակացություններ: Այսպես, նախագծերի ընդունման հրատապությունը պայմանավորված է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստին տրված հանձնարարականի պատշաճ իրագործման և համայքնի ավագանու անդամների նկատմամբ անբարենպաստ հետևանքներ չառաջացնելու անհրաժեշտությամբ:		